




Ս. Կարապետ. Ս. Աստուածածին. Ս. Ստեփանոս. Ս. Սարգիս



Ս. Գրիգոր Լուսավորիչ.

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ՀԱՏՈՐ ԽԲ. ՊՐԱԿ Դ.

1884

ՀՈԿՏԵՄԲ. ՆՈՅԵՄԲ. ԴԵԿՏ.

ՀԱՆԴԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՂԵՔՍԱՆԴԻՐԱՊՕԼԻԾ ՄԻՆՉԵՒ Ի ՄՐԷՆ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁ

Ներկայ 1884 թուի ապրիլի 26ին վերջ 'ի վերջոյ որոշուեցաւ իմ ուղիւ, բուժիչներ, յատկապէս Գեր. Հ. Ղեւոնդ վարդապետ Ալիշանի մի փափագը լե. ցընելով՝ դէպ 'ի Մրէն, Բագրատունի թագաւորաց տշնանոցը, Խժկօնք և Շիւրակ դաւառի մի քանի աւերակները, ըստ չափոյ կարողութեան՝ հետաքոտելու և լուսանկարով հանելու, Հեշտ է ուրեմն մակաբերել, որ իմ ծանրութիւնը բաւական մեծ պիտի լինէր, լուսանկարչական մեքենան, դեղորայք, գործիներ և այլ կենսական անհրաժեշտ պիտոյքներ հետո տանելով։ Մի քանի օր էր՝ որ շարունակ տեղում էր յորդ անձրև. ճանապարհները խճուղի և կանսնաւոր չլինելու առթիւ՝ ծածկուած էին գրեթէ անանցանելի ցեխով, ուստի և մեր նստած կառքի անհրաժեշտութիւն էին կազմուած։ Առաւօտեան ժամը 10ին մենք անցանք այն քարաշէն կամուրջի մօտով, որ կառուցուեցաւ 1879-80ի, և գետին տապալի.

ցաւ 1883 թուի դարնանը, Արփաշայը բարձրանալիս։

Այժմ լերան ոչ պիւրան սուր գագաթներն ծածկուած էին թանձր մեղով. քամին փչում էր հարաւից, իսկ կտոր-կտոր ամպերի ներքեից՝ երբեմն երբեմն ամօթ լաւած հայուհու պէս՝ երեսը ցոյց տուող արեգակն յանշափս վերմացնում և տաքացնում էր մեզ, ինչ հետ ունէի լուսանկարչական արհեստին փորը ինչ ծանօթ մի երիտաւոր, Սարգիս Ահարօնեանց անունով։

Առաջին դիւղը, որ հանդիպեցանք մենք՝ պարսկաբնակ Ղարաքիլիսուն էր, որի կենդրոնում երևում են տակաւին աւերակ եկեղեցու քաջայուլած բեկորներ, չբնապատուած հողի և քարի շեղջերով... Հաղիւ թէ մի քանի տասնեակ քայլափոխ հեռապել էինք, երբ աղմկալից շաշիւնով սկսեցին թափուել անձրևի խոտոր կաթիլները։ Մեր նրստած կառքը ծածկուած չէր սնշով իսկ քամու սաստկութիւնից՝ անհնարին էր բաց անել ամպհովանին. մի քանի

վայրկեաններէից յիտոյ՝ մենք ոսից մինչև զլուխ թրջուած էինք :

Կէս օրին ժամանեցինք պարսկաբնակ Ալալի գիւղը, որի կենդրոնում եկեղեցու աննշան մնացորդի գտաւ թին բազմած արագիլը՝ կայծեւ Հայի բաղդն էր արտասփում . . . Ժամը մէկին հասանք Քաշ — Շեօրակէալ, հնումն Երուզղաշուրս կամ Շիրակուան, կամ ստրականների բնակած վայրում, ուր՝ իբրեւ կիսակենդան վկայք՝ մնում են բերդի մասերը և մեծաշէն եկեղեցին, որ հիմնարկուած է եղել Սմբատ Ա. Բագրատունի թագաւորէն Ս. Յովհաննէսի անունով, ուր և ինքը Գէորգ կաթողիկոսի ձեռքը թագաւոր է օծուել : Այս տաճարը թէ արտաքուստ և թէ ներքուստ թուխ և գորշ կոփածոյ քարերով հաստատուած է . սրոյ վերայ կատարեալապէս փայլում են ժամանակակից ճարտարապետի ճիգն ու քանքարն . ունի զմայլեցուցիչ քանդակներ և մանուսածքներ : Արտաքին կողմից հաւաքալայն որմը 14 սաժեն և 2 արշեն (32 մետր) երկարութիւն ունի, որի վերայ գտնւում են ութ պատուհաններ, և եկեղեցու մուտքը : Այս որմի աջ և ձախ ծայրերում դրուած երկու երկու ըստ բաւականի մեծկակ պատուհանները՝ ունին նուրբ և քանդակագործ շրջանակներ, որոց մօտ դրուած են և որմնասիւնների լայն և եռանկիւնաձև խորշեր, որոց աղեղնաձև գաղաթները ունին ճառագայթմանման փրուածքներ : Պատի կենդրոնում բացուած է քառակուսի դուռը, որի ճակատին՝ երեք միասեռակ կլորակ և գալարուն քանդակներով միահագին քար կայ գրուած, իբրեւ դրան կամուրջ : Սորա բարձրում նկատելի է մի մեծ և բոլորչի ուռուցիկ քանդակ վարդի նշանաւորութիւնով իսկ զսրա բարձրից տեղ տեղ միայն երևում են մանեկաձև կամ մարի փխրուած քանդակները : Դրան երկու կողմերում ևս նոյնպիսի քանդակագործ շրջանակներով գտնւում են զոյգ մանրիկ պատուհաններ : Ուղիղ դրան բարձրը, կենդրոնում, դը-

տանվում է մի քառակուսի խաչ, որի չորս թևերի վերին մասերը աւելի լայն են, մանր խորշերով և գեղեցիկ ծաղկանկար քանդակներով . իսկ մէջ տեղը ներկայացնում է մի զարդարուն բուրակ, գալարուն և սրանկիւն շերտերով : Այս խաչարձանի աջ և ձախ կողմերում դրուած են քառակուսի շրջանակներով երկու նեղ և երկար պատուհաններ, սոցա փրուածքները միմեանց յար և նման են . մանր և քառակուսի : Որմի վերայ՝ տեղ տեղ՝ նրկատելի են վերին մասի քանդակագործ պատկերի (գոռնիդ) շարունակութիւնը : Դոցա վերայից դրուած են ուրիշ որմեր, որով կարողացել են պատի դմբէթաձև վերին մասը հաւասարացնել ցած մասի հետ : Այս միջոցով նաև տեղական բնակիչները կարողացել են եկեղեցու մէջ և ձեղունի վերայ ամրանալով պաշտպանուել թըշնամու արձակամեերից : Ուրեմն դա եղել է և՛ ապաստանարան և՛ մարտկոյ և՛ սրբութեան տաճար :

Արեւելեան որմը 7 1/2 սաժեն (16 մետր) երկարութիւն ունի, երեք պատուհաններով, որոնց երկուսը պատի զոյգ ծայրերումն են, բազմաձաղ և քանդակագործ շրջանակներով . երկուրդ ուղիղ որմի մէջտեղում է, որի քանդակները նուրբ են և մանր, քառակուսի և բազմախորշ : Սորա երկու կողմերում էլ դրուած են որմնասեանց եռանկիւնաձև խորշեր, որոց գաղաթները զարդարուած են նոյնպիսի գեղեցական կամարներով : Թէ այդ խորշերը և թէ պատուհանները ծածկուած են այսօր մանր քարերով, որով և պատը անզարդ դրութիւն ստացել և տգեղացել է : Հիւսիսային որմը յար և նման է հարաւայինին . նոյն չափով և զոյգ խորշերով, այն տարբերութեամբ միայն, որ այս կողմից եկեղեցին մուտք չունի : — Արեւմտեան պատը համանման է արեւելեանին . սորա հանդէպ դըտանվում է քարաշէն մի բազմաստիճան սանդուղք, համարեա եկեղեցու բարձրութեամբ, որ մի ժամանակ տա-

նելիս է եղել Ս. Յովհաննէսի ձեռունը . իսկ սա այժմ մի բլրակի է նմաներ, կա- նաչ խոտով ու մամուռով ծածկուած : Չեղունը ամբարձած է չորս սիւների և վեց որմնաստանց վերայ, որի կախողի- կէն իսպառ կործանուած լինելով՝ նորա տեղը ծածկուած է փայտեայ տախտակ- ներով : Այդոր ներքև լինում է ժամ- ասացութիւնը : — Այս տաճարս թէ և ունի մի քանի կոտոր արձանագրեր, սակայն նոքա ամէն ճշգրտութեամբ ճի- րակի տեղագրութեան մէջ զետեղուած լինելով, առաջ բերել այս տեղ ես ա-ւելորդ եմ համարում ¹ :

Գիւղը զուտ հայաբնակ է 80-90 տանից բաղկացած . զիրքը մի գեղեցիկ բարձրաւանդակի վերայ է . հողը բա- բերբեր է, օդը հովասուն, իսկ ջուրը սառն և առողջարար . դաշտերը ոռոգ-վում են Ղարախանի գետակով : Ես թէպէտ տրամադրուած էի նկա-րել այդ փառաշէն մենաստանը, բը-նական դիրքն ու վայրերը, սակայն ե-ղանակի փոփոխականութիւնը առիթ եղաւ այդ աշխատութիւնը թաղնել մեր վերագործին :

Ժամը 4ին հասանք Աւտարխունս պարսկաբնակ զիւղը, որաեղից և հարկ էր անց կենալ Ղարս — չալը, որ սաս-տիկ բարձրացած լինելով՝ անհնարին եղաւ անցնել կապով . զիւղի պար-սիկները բաւական թանգ զնահատու-թեամբ հաճեցան մի զոյգ զոմէշով սայլ լծել, որի վերայ մի կանգունաչափ բարձրութեամբ տախտակներ ամրա-ցրած, մեծ դժուարութեամբ կարողա-ցան ազատել մեզ՝ կատաղած գետի կլանող ալիքներից :

Ժամը վեցին մենք իջևանեցինք Եի-րանի, կամ ինչպէս անուանում է Հ. Ղ. Վ. Ալիշանը իւր Շիրակի տեղագրու-թեան մէջ, Ոմուտ գիւղում, տեղական միակ հայ Գրիգոր քեօխլի (քէհկա) տանը : Այս գիւղի գիրքը շատ վայե-լուչ է . ցածրկիկ բլրակների լանջերին զրուած ունի սառն և մաքուր վտակ-

ներ, առատ մարգագետիններ, բերրի և արգուանդ վարեւահող . բնակիչները մնտաւորապէս 45 տուն պարսիկներ են . դոցանից 40ը գաղթել են Երևանի նա-հանգից 1880 — 1881 թուականներին, և ինչպէս ասացի՝ մի տուն միայն Հայ կոյ հիմոյ . իսկ 1879 թուին այս գիւղը այցելած ժամանակ՝ 16 տուն Հայ բնա-կիչներ ունէր, իւրեանց երիտասարդ քահանայով . ես այն ժամանակ տեղա-կան վեց տուն բնիկ սրիկայ Պարսիկ-ների զաղրալի արարմանց մասին մի թղթակցութիւն գրած էի Մեղրաին, որով նախատեսում էի տեղական Հայ բնակչաց այս առուր անմխիթար վիճա-կը, սակայն, ինչպէս երևում էր Մեծ . Պ. Սիմէոնեանցի (Մեղուի խմբագրի) մասնաւոր նամակից, այդպիսին իրե-նից անկախ պատճառներով անկարող էր տպագրել, ուստի և յանձնուած էր ուր հարկն էր պատշաճաւոր տնօ-րինութեան : Նոցա անվերջ բողոքները արգասաւոր վախճան չունենալով, 'ի վերջոյ 1882 թուին ոչ յօժար կամ-քով՝ փոխադրվում են Ղոչունձաղ ա-նունով աւերակ գիւղը, որը մի ժամա-նակ թոշովանքի սեփական կալուածքն է եղել : Իսկ Գրիգոր քեօխլին՝ թերևս իւր հողու փրկութեան համար ամե-նայն հալածանք յանձն առած, քրիստո-նէական եկեղեցւոյ պահպանութեան համար միայն՝ չի շարժվում իւր տե-ղից . շնայելով որ նա այժմ զրկուած է նախ քան ուրա — թրքական պատե-րազմը իւր տիրած հողերից, և թերևս դուրսիւր գնար այդ գիւղից այն ժամա-նակ միայն, երբ հոգեւոր իշխանութիւնը իսպառ քանդէր եկեղեցին . . . :

Հետեւել առաւօտեան շնայելով որ մառախուղը նայիպէս պատել էր Ելիւն-լին, և կաթիլ կաթիլ թափվում էր անձրևն, մենք գոհ ստույլ դուրս գը-նացինք հիւրասէր շինականի սեմից : Ծաղիկների անուշահոտութիւնը, ման-րիկ թռչունների գիւրեկան դալայ-լիկները փարատում էին մեզ վերայ ծանրացած եղանակի անախորժ տալա-ւորութիւնը : Կամայ կամայ սկսան

¹ Տե՛ս Տեղագրութիւն Շիրակայ, Երես 8-11 :

չքանալ մի ին ամսերն, և արդէն տա-
րածվում էին մեղ վերայ արեգակի
թույլ և զողոթին ճառագայթները:
Մենք անցանք 1879 թուին հիմնա-
կուած հայաբնակ թաւա — քեռնից ա-
նունով գիւղի կենդրոնից, որի ան-
ցեալը այնքան մօտ է, որ յիշատակու-
թեան արժանի և ոչ ինչ չի պարունա-
կում:

Բարձրանալով ճակատամարտների,
մանաւանդ վերջին ուս-թըքական
պատերազմի ժամանակ կռուող հա-
կառակորդներին ապաստանարան դար-
ձած՝ իւլ — քափա լեռների կրճքով, հե-
ռուից հանդիպեցան մեր աչքերին Ա-
նիի հրաշակերտ բուրդերն և պարիսպ-
ները. նորա կիսականդուն և կիսաւեր
տաճարները. իսկ մենք յափշտակուած
այդ գողարիկ տեսարանով՝ մտածեցինք
գլխերէ Անիի՝ մեր սևաբաղդ և այրիա-
յամ մօր ծոցում. մի օր էլ զոհէ նորա
յանկալի տեսութեանը:

Անցանք հապար անդամ գրուած և
խօսուած Աւագ զրան անցքով, որի
հանդէպ բազմաթիւ բուրգերին կից՝
տա՛լաւին անվահեր կանգնած է Բա-
ղրատունեաց առիւծը, սակայն նորա
թաթերը ջախջախուած են, աչքերը
կուրացած, տառմեները թժացած՝ չըղ-
թան կրճելով:

Ես տեսայ իմ վաղեմի բարեկամ, Գեր-
ներսէս վ. Տիգրանեանցն, ինչպէս և
էր առաջ իւր վանահայրական պուշ-
տօնի մէջ: Նա ամենայն սիրով և ու-
րախութեամբ հիւրընկալեց մեզ. խօ-
սեցաւ մի քանի հետաքրքիր հարցերի
և Անիի այս աւուր տնտեսական ան-
միսթար վիճակի մասին: Թէ և կառա-
վարութիւնից արդէն յանձնուած էր
մի հարիւր օրավար հող, սակայն նիւ-
թական միջոցի անձուկ լինելը, հողի
քարքարոտութիւնն և ջուր չունենալը
կանոնաւոր արդիւնք չէին խոստանում:
Սր ըստ օրէ նուազում էր Անիին այցե-
լողներ թիւը, որ գրեթէ միակ աղ-
բիւրն էր նորա միաբանութեան պահ-
պանութեանը, իսկ կաղնուակի նպաստ-
ներ համարեա երբեք չէին ստացվում:

Խեղճ հայր սուրբը անցեալ 1883 թուին
օրը ցերեկով թուրք աւաղակներից
թաւանվելուց գկնի¹, այլ ևս անկարող
էր շիտակել իրեն. նա այժմ մեծ դժուա-
րութեամբ կարողանում էր հայթ-
հայթել իւր օրական տպրուտը: Ա-
նիի միաբանութիւնը բաղկացած է մի
քանի հողով, որ են՝ Հայր սուրբն, մի
տաճիկ պահապան, և մի ծառայ իւր
ընտանիքով:

Հիտեալ առաւօտուն վաղ՝ մեր կառ-
քը ընթանում էր դէպ ի նպատակա-
տելին, գէպ ի թժկօնք. ճանապարհի
կիտին հանդիպեցաւ մեզ Անիի գիւղացի
Տաճիկ Մուխտարը (գիւղաւագ). նա
զանազան անցքերի նկատմամբ երկար
խօսեց, պատմեց Մարաս — Բերդի մօ-
տակայ անցեալը, որ իրօք արժանի էր
ուշադրութեան. և զա նման էր այն նը-
կարդրութեանը, որ Հ. Սիլիւսն արժան
էր համարել զեանդելու իւր «Շիրա-
կի» 124 երեսում:

Տաճիկը նոյնպէս պատմեց՝ որ սորա-
նից մի քանի տարիներ առաջ՝ իրենց
Անի գիւղում գտնուել է մի քառաթեւ
խաչ, որ վաճառել են մի Տաւշանդըշ-
լաղեցու ութ բուրիով. այդ խաչը ձու-
լածոյ ոսկի է եղել կէս արշն բարձրու-
թեամբ. երբ քաղաքում քանդել են
գորան, ներսից դուրս է եկել մի այլ
խաչ փոքր զիւքով մեծ ակներով (եա-
ղութի և զմութիւտի քարերով), կրե-
լով իւր վերայ նաև մի երկու շարք
հայկական տառերի: Այդ խաչը, ա-
սում էր Տաճիկը, այժմ գտանվում է
Ս. Էմմամնում:

Կէս օրին մենք ժամանեցինք Տեկու-
նս պարտը համարեցի իմ ճանապար-
հորդութեան մասին յայտարարել տե-
ղական ոստիկանութեանը. որի ներ-
կայացուցիչը, աղղով վերացի, յանա-
փրս ուրախացաւ, և պատրաստակա-
նութիւն յայտնեց հարկաւոր դէպքում
օգնել ինձ՝ ձեռնարկած նկարչահա-
նսական գործում:

¹ Այդ առթիւ իմ մանրամասն գրութիւնը
այսուհետ «Մեղու Հայաստանի» ըստգրում,
1883 թուականին:

Պակաւ ինչ յետոյ՝ ձորակի ծայրում
իմ աչքերի առջևն էին խճիփոխից նախ
Ս. Լուսաւորչի և ապա միւս Սրբավայ-
րերի կիսափուլ ծայրերը, շողողում
էր Ս. Սարգսի գեղեցիկ խաչը։ Եւ մը-
տայ դաւիթի շէմօւմ. տեսայ՝ որ նոյն
համակրելի և սիրելի ծերուկ վանա-
հայրը, նոյն Յարութիւն վարդապետ
Մանուկեանը դարձեալ մուրճը ձեռին
աշխատում էր անհանդիստ. ամէն մուր-
դավայել հիւրասիրութեամբ ընդու-
նեց նա մեզ, և յատկացրեց մի սե-
նեակ լուսանկարչական գործիքների
և այլ պիտոյից համար։

Ապրիլի 29ին առաւօտուն լողայանք
այս կողմերում իւր փրկորար յատկու-
թիւնով յայտնի, ոչ այնքան տաք հաւն-
քայիւն ծծմբային — երկաթխառն ջը-
րում, որ քարերով չընկալաւուած մի
հարթ և կանոնաւոր աւազան է, մե-
նաստաններից մի վերստայափ հեռա-
ւորութեամբ, համոնուն դետի (խրժ-
կոնք կամ խժկոնից ջուր) եզրը, սեղ-
մուած ձորակի մէջ։

Համբուրելով մեր նախնիքներից
կանդնած Ժ — ԺԱ դարերում սրբազան
քարերը, նկարեցինք մի միայն Սուրբ
Ստեփանոսի մենաստանը, իւր տապա-
նոքարերով, խաչվէմի պատուանդա-
նով և հանգստարանայ բարձրում գը-
րուած հովանոցների մնացորդներով։
Ապրիլի 30ին սկսեցինք ուշատու-
թիւնը. նկարեցինք մի քանի ճարտար-
արուեստ քանդակներով և մանուածք-
ներով հարուստ ճաճարները, սեպա-
ցած Ժայռերը և անդհախար ձորակը։

Մայիսի 1ին ցուրտը և քամին այն-
քան սաստիկ էր, որ չրկըրը ուռեցան
թէ սենեակների մէջ և թէ դուրը.
սա մի տարօրինակ երեւոյթ էր, որի է-
րակաւութեանը մենք ինքներս անդամ
երկբայում էինք. և ո՛վ կտողէր մտա-
ծել թէ մայիսի 1ին, խժկոնից ձորա-
կի մէջ, ուր բուրում էր ծաղկանց ա-
նուշահոտութիւնը, բարձրացած կա-
նաչը և ծառերի բողբոջները, որք ոչ
միայն զարնան, այլ ամռան եղանակի
արգասիք կարող էին համարուել, և

յանկարծ զգու բոլորը խամրեցան,
թառամեցան և սևացան. ինձ հետ բո-
լոր վանականներն էլ այս երեւոյթը
բնութիւնի մի տեսակ խաչ կամ պատիժ
էին համարում։

Մայիսի 2ը թէ և չփոխեց իւր կեր-
պարանքը, — ցուրտ էր և քամի, — սա-
կայն յալոցեցաւ ինձ սուռդել «Շի-
րակի» մէջ զետեղուած Ս. Սարգսի
արձանագրերը, և օրինակել այնպիսիք,
որ թէ տեղի բարձրութեան և թէ ա-
ղաւաղուած ու սեղ տեղ փչողուած լի-
նեւու պատճառաւ՝ ի լոյս ընծայուած
չեն տակաւին։ Ահա այդպիսիք.

Ս. Աստուածածին եկեղեցու հարա-
ւային որմի ճակատին՝ զօտիաձև մա-
կադրուած է չորս տող որոյ առաջին
տողից հնարաւոր եղաւ ինձ կարգաւ.

«Յանուն Աստուծոյ ի՛նչ ՆԻՇԷ՝ Թուակա-
նիս ... (երկրորդից) Եւ ազատեցի յ (վեց
տաւ փչողուած է) ն նեղութենէ յ Եւ հանե-
ցի ... (երրորդ կարգից) տիւ եւ ամ (վեց
տաւից յետոյ, որ վչողուած է) տեսաւն Ասա-
նայ արշարունեաց Եպիսկոպոսին ... (չոր-
րորդ տողից) ... տարեցի զան (6-7 տա-
ւից յետոյ) ունիւն վանացս եւ ազատեցի
որ եղաւ աշ.....»

Այդ արձանագրութեան բարձրը,
ոչ այնքան խոշոր տառերով, կարմիր
քարի վերայ փորագրուած է հետեւեալ
յիշատակարանը.

«Ի Թուիս Ոկթ ողորմութեամբն Աստու-
ծոյ եւ Արք. Լսեմի կրանակաւնս Կոն-
դերս * դարբին տուաք զսա երկու դուռն
սներն նոր ուխտս խժկանից եւ սոքա հաս-
տատեցին զվեծն շաքաւն. պատարագ ըզ-
մինն իգնատիրոսի մին Յոհաննիսի մին հաւր
տիկն ... եւ մին կանդեղոյն. որ զգրեալս
խափանէ պատմեացի ի Տեառնէ»։

Սուրբ Սարգսի մօտ, խաչարձանի
ճակատին թէ և կար 7 — 8 տող գը-
րուածք, սակայն սառերի անկանոն,
մամռակալած և աղաւաղուած լինելու
առթիւ կարգաւ կամ օրինակել ինձ
անհնարին եղաւ։

* Թերեւս լինի « Կանդերոյն », որ յիշէ և այլ
անգամ փոքր մի ստորէ։

Եղանակն կանոնաւորուեցաւ և մենք սկսեցինք գործել: Օրինակեցի այս և այն այցելուներէից տաճարների որմերին մատարտով, ամուխով և կաւիճով զրոյմուած թէ չափածոյ և թէ ընդարձակ գրուածքները: Երրեցից այս տեղ ես առաջ եմ բերում մի քանիսը միայն:

«Եկեալ այս ուխտ սուրբ փառաւոր, Որ մեծ Հայոց է գործ շնորհ.
Աջ յարտասուս համբոյր ետու
Սուրբ նշխարացս հուշակաւոր»:

ԱՂ. ԱՐԱՐԱՔԵԱՆՏ:

Նկուղի գրան ճակատին 1883 թուա կանով:

«Չայն տոբ աւերակ, ինչո՞ւ լռում ես,
Ողբակից ինե՞լ չկամիս դժբաղդիս.
Շարժեցէ՛ք զեփիւս սոյիքը վիտ-վիտ,
Խառնեցէ՛ք արտասուքս այս չրերիս հետ»:

ԲԱՐՍԵՂ ՄԵԼԻՔ ԳԵՐԳՈՐԵԱՆՏ

Այսպիսի շատ գրուածքներ կարգաւուց յետոյ, որպէս զի ես էլ մի բան առած լինէի, ուսուցչիս՝ Պ. Ա. Արաւսեանցի ստորագրութեան մօտ՝ գրեցի հետեւեալը:

«Դու, սրտաբեկ Հայ այցելու, կու լսաւ ղէկուոր, վասն զի քո իսկական աչքերով տեսար, բերանով համբուրեցիր եւ ձեռքերով շօշափեցիր նախնեացդ փառաւոր անցեալի, նոցա առաքինութեան, Էջմարիտ աստուածապաշտութեան եւ մեծութեան հրաշակերտ կոթողներին ... Թող տիեզերք չար նախանձից շացած ուրանայ քո վաղեմի աշխարհակալութիւնը, մեծութիւնն ու փառքը, միթէ սոքա կենդանի եւ խօսուն վկաներ չեն ... Դու, նախնեացդ արժանաւոր զաւակ, բուռն հաւաւանքով միայն սամմաստիակեցիր զգայուն սրտիդ խորհրդաւոր ալեկոծութիւնը, սակայն....

Իմ հարցմանը թէ մնում էր տակաւին վանքում՝ այն բուրվառը՝ որ զբաւնուած էր Ս. Սարգսի արեւելեան զաւիպայրի ներքեւ, հայր սուրբը պատասխանեց, որ դա ինչպէս մի գեղեցիկ հնութիւն, պահպանում է իւր մօտ: Այդ բուրվառը բաւական հին է. գեղեցիկ է թուճից (պղնձից) ձուլուած:

Իւր վերայ կրում է վիշապների և վագրների ուսուցիկ արձաններ. ունի նաեւ այս արձանաղիրը:

«Յիշատակ է Պահրամի որդոյ Անդանին ի դուռն Աճալու սուրբ եկեղեցու»:

Ինձ այնպէս է թուում, թէ դա կռապաշտական մեհաններից անցնելով քրիստոնէական եկեղեցուն, (ինչպէս երևում է սկզբում շղթայ չէ ունեցել) շատ յետոյ ընդունել է այդ մի շարք տառերը:

Մայիսի եօթը գեղեցիկ օր էր, ջինջ և պարզ. ուստի և տեղական միաբան Յակովբ վ. Մուրառեանցի հետ, մեր դորժերներով, մեքենայով և գեղերով ծիլ-ծիլ ժայռերի կուրծքով՝ բարձրացանք Ալալայի կամ Ագրակ գիւղը, որ հազիւ 1 1/2 վերստ հեռաւորութիւն ունի Խժկօնից ուխտէն: Այս գիւղը յայտնի է իւր մի փառաշէն եկեղեցիով, որ կրում է Ս. Ստեփանոս Նախավկայի անունը. հիմնադիրը յայտնի չէ, ունի արձանագրեր հայկական ՆԽԵ (1006 թրիստոսի) թուականից:

Մեր ջանքն՝ պէթ մի քանի կողմերից կանոնաւոր մեղաւորիւններ ստանալու, ապարդիւն եղան. զխաւերապէս մութ սենեկին՝ անասնոց աղանդութիւնէ և սաստիկ տաքութիւնէ առաջացած գորշ լորշի պատճառով, ամբողջ 600 դրամ արծաթ (հեղուկ) փչացրած եմ մի միայն մեղաւորի ստանալու համար, անիծելով մեր շինականաց որջերն ու դոմերը և անոնց զարշահութիւնը՝ մենք վերադարձանք ի Խժկօն:

Ագրակում թէ քահանան և թէ ուրիշ արժանահաւատ անձինք՝ մատնանի ըրին մի բանի հնաշէն փոքրաւոր կամ իսպառ կործանուած հայկական ամրոցներ և մարտկոյններ: Օրինակ, նոքա ասացին՝ որ իրենց գիւղի արեւելեան կողմը երեսցող ժայռերի գագաթին (ես ինքս ալ ականատես եմ եղել մի քանի անգամ) գրուած է Դամուշ զարան կամ Տէմիր գալէ. այս անունը՝ թերեւս հայացնելով՝ Յարութիւն վարդապետը կոչում է երկուսի

Բերդ. այս ամբողջի մասին մասնաւորապէս և թժկօնից, Աղրկու, Ալէմու, Տալարի, Բագնայրի, Տեկուու և ուրիշ հնութեանց ընդհանրապէս, ես խօսեւեմ 1881 թուին, Մոսկվայում հրատարակուող՝ փարոս — Հայաստանի պատկերազարդ հանդիսի մէջ:

Աղրկու մօտ՝ նորա արեւմտակողմը՝ կայ մի ուրիշ աւեր ամրոց, որ իւր իսկական (պատմական) անունը՝ կորուսած լինելով, ժողովրդից կոչվում է Ղալաւնոյ կամ Գալէճիկ: Ասացին՝ որ գտուին մեծ քանակութեամբ նետի սլաքներ, թէ երկայայրի և թէ քառաթիւ, զեղին պղնձեայ և պողպատեայ, նա և հին զրամբեր, իրենց խօսքին իբրեւ ապացոյց: Նոցանից մէկն ընծայեց ինձ 2 հատ պողպատեայ յիշեալ սլաքների տեսակներէից:

Հին — Տեկուու բարձր լեւան գագաթին՝ տարածուած են հնադարեան ամրոցի բեկորները, որ սովորաբար կոչվում է Տեկուու թերդ:

Մի և նոյն գիւղից երկու ժամու ճանապարհ հեռւորութեամբ դէպ 'ի աբմուսքէ Շարք — Օլլի Ղարա — Ղարա ամրոցը, կամ թերեւ մարտկոցը, որի պարիսպները կան տակաւին կիտականդուն:

Ալաւու լեւան կուրծքին կան քուրերի մեծամեծ շէջեր և հոյի կոյտեր, որ բոտ աւանդութեան հղել է մի ժամանակ անառիկ պատուար, և 'ի Տաճիկ ժողովրդից ստացել է իսլամ — Օլլի Ղարա — Ղարա անունը. դա ընկնում է Ալրտակից դէպ 'ի հիւսիս-տրեւելք երկու ժամու ճանապարհ հեռւորութեամբ:

Նոյնքան հեռուն՝ ուրիշ քարաժայռերի գագաթին երևում են հետքեր նշանաւոր պարսպապատ շինութեանց, որ անցեալ ժամանակների ռազմագիտական նկատմամբ՝ պէտք է ընդունել տեղի ամրութեան, որ այսօր կոչվում է Ղարադեօզներ:

Յիշեալ մարտկոցից հազիւ կէս փրստ հեռւորութեամբ կայ մի այլ ամրոց, կիսաւեր շինութիւններով և

պարսպի մնացորդներով. դա կոչվում է Ղարաղլըզ-դաւուն (Սեւ աղլիկ փախչող կամ փախչողնող):

Պարտախալս մի շէն բերդ է, Քիւրդքնակիշներով, Աղրակ գիւղից մի ժամ հեռուն, դէպ 'ի հարաւ եւաղլուձաւ լեւան կուրծքին: Այդ լեւան միւս երեսին՝ դէպ 'ի կաղզուան՝ գրուած է մի ուրիշ ամրոց, որ սովորաբար կոչվում է Աղձա — դալա (Սպիտակ — բերդ) կան տակաւին փոքրաւեր պարիսպները, ծեփուած սպիտակ գաճով, որի ստիժիլ դուցէ և թիւրք բառիւ ստացած լինի վերոյիշեալ անունը: Եթէ հնարաւոր լինէր՝ ես անկասկած կ'այցնէի այդ բարդ ամրոցներին ու մարտկոցներին և առ հասարակ այն տեղերը, որոնք հեռու են մնացել մեր թէ պատմաբանների, թէ տեղագիրների և թէ հասարակ այցելուների տեսութիւնից. . . Միթէ պատերազմների տապալելու դարձած Հայաստանն իւր բերդերով և անառիկ պատուարներով նոյն քան հարուստ և երեւիլ չէ եղել՝ որքան և հոյակապ ճաճարներով. . . :

Աւարտելով մեր գործը թժկօնում, ես վանահօր համահաճութեամբ քանդել տուի այն նեղ և փոքրիկ պատը, որ վերջին ժամանակներում շարեւով ծածկել են Ս. Սարգսի և մեծ խալարձանի հանդիպակաց արձանագրերը, որոնք տակաւին օրինակուած չեն ոչ ոքից: Ես կարողացայ ընդօրինակել միայն Ս. Սարգսինը, որ բաղկացած է 24 տողից. իսկ խալարձանի յիշատակարանը դուրս բերելու արդեւք եղաւ այն հանգամանքը, որ պատի այդ կողմի մասը սաստիկ խարխափած լինելով, կարող էր տապալուիլ և փասսել ձորակի բանդարանոցին ու պողատու ծառերին:

Յանուն Աստուծոյ: Ուկր. Թուականիս ես Դաւիթ որդի Գրիգորոյ գաւառար ամիր սպասաւարին Զարարիս տեսի գալայժառուռիւն սուրբ ուխտիս թծկանից ես եւ որդիք իմ ու արագաւոր Գրիգոր եւ գայլս շէրպարիք եւ էտու զիմ զսէփիական

զգիւնն զվ'ահանաւծիղ * զկէսն
'ի սուրբ Մարգիս յիշատակ ինծ եւ ծն
ողաց իմոց վասն որո հայրս ցովհա
նէս եւ վարդապետս եւ այլ միաբա
նքս հաստատեցին զԳլաւնի զ
Յակոբա զՊաւղոսի եւ զՊետրո
սի եւ զսուրբ Շողակաթին զպատարա
գն յամենայն ամի որ լինի յամ
ենայն եկեղեցիքս ինծ առնել ան
խափան. էմէ որ հակառակի ի հար
անց կամ ի պատրոնաց եւ զիմ
զիշատակս խափանէ, որչափ
Աստուած աւրինած է այնչափ այն մարդն
անխնայ է:

Մի այլ արձանագիր՝ որ մնացած
էր մթութեան մէջ Ս. Աստուածածին
եկեղեցու խորանում, օրինակելով՝ ես
հրատարակած եմ փայտոս օրագրի մէջ,
1884 թուին:

Խծկօնից ուխտը այժմ դրուած է շատ
կանոնաւոր պայմանների մէջ. բարե-
խիղճ վանահօր, միաբանների և աշա-
ւուրջ հոգաբարձուաց իրաւասութեան
ներքեւ. հոգաբարձուք են արժանապա-
տիւ Տէր Բովհաննէս քահանայ երի-
ցեանցը՝ Տեկուում, Աղարկեցի Սահակ
Տէր Եսայի լինեանցը և Ծպնեցի Գե-
ւորդ Դարբինեանցը. զորք ընտրուած
են հայր սուրբի վանահայրութեան և
Խծկօնից նոր 'ի նորոյ կենդանութեան
առաջին օրից, այսինքն 1878 թուից, և
հաստատուած են այն ժամանակի թե-
մական առաջնորդի գրութիւնով:

Յարութիւն վարդապետը թէ և տա-
րուաբ փոքր (նա ծնել է 1830 թուին),
սակայն սպիտակ մօրուքով մի պատ-
կառեցի անձնաւորութիւն է. խելացի,
զործունեայ և բարեպաշտ. ընդունել է
կուսակիցութիւն 1856 թուականին
կոտոց անապատում, վարդապետացել
է 1863ի, անդակն Մարդար Եպիսկո-
պոսի ձեռամբ. 11 տարի եղել է այնտե-
ղի և ապա 10 տարի Սեանայ միաբան:
Տեղափոխուել է Խծկօնք, որ ամայի
աւերակ և թափուր է եղել, համաձայն
խնդրանաց հանգուցեալ հայազն գե-
ներալ Յ. Լազարեանի 1878 թուակա-


նին՝ բարեկարգել է եկեղեցին, մա-
քրել է բոլոր սրբավայրերը՝ անասնոց
աղտեղութիւններից և հողի ու քարի
շեղջերից. դարձեալ, նայն նորոգեց
փոքրաւեր անդերը, հոսեցրեց սառը
աղբիւրը, կանոնաւորեց հանքային ջը-
րերը, և 2 1/2 վիբատ տարածութեամբ
ժայռոտ ճանապարհը, շինեց մի ջրա-
ղաց, հիմք դրեց դպրոցի շինութեանը,
պարսպով պատեց եկեղեցիքը և ուխ-
տաւորաց համար կառոյց հինգ կանո-
նաւոր սենեակներ. զորդարեց Ս. Սար-
գիսը խաչկալով, գեղեցիկ ջահերով ու
աշտանակներով, ուր հիմայ լինում է
ժամառացութիւնն. իսկ արտաքուստ
կաթողիկէն վերանորոգելով կանգնեց
փրկչական քառաթիւ խաչը, կանոնա-
ւորեց կատարելապէս ուխտի տնտե-
սական վիճակը. ունի այնքան կաթ-
նատու անասուններ և լծկան, որքան
կարող էր ունենալ մի հարուստ գիւ-
ղացի ընտանիք, և այդ բոլորը նա ա-
րեց մասնաւորապէս Աղեքսանդրապոլ
քաղաքի հայ հասարակութեան օժան-
դակութեամբ:

Յակովբ վարդ. Մուրատեանը փո-
խադրուել է այստեղ վասպուրականի
աշխարհից 1884 թուականին, վարդա-
պետացել է 1857 թուին. չափազանց
աշխատասէր մարդ է, զիտէ որմնա-
դրութիւն, հիւսնութիւն և ամենալաւ
պարտիզպանութիւն. առուօտեան ար-
շալոյսի հետ մինչև երեկոյ նա աշխա-
տում է անվերջ և անդադրում:


Յակոբ վարդապետը յաջողակ ձայն
ունի և քաջահմուտ է մեր եկեղեցա-
կան եղանակներին և երգեցողութեան
ի դէպ է յիշել՝ որ Խծկօնից ուխտին
ուսն բարեխնամ կառավարութիւնից
յատկացուած է 250 օրավար հող. որի
առթիւ գլխաւոր կառավարութեան
կանցեւարիայից՝ 'ի 18 օգոստոսի 1883
(թիւ 628) յայտարարուած է Գրի-
գորիոս Եպ. Աղուանեանցին:

Մայիսի 8ին բարձրացանք Ղալա-
ձուզ ամրոցը, որ դրուած է վիթխարի
ժայռերի բարձրում. ուր մեծալէն տնե-
րի բեկորները, պարիսպների մասերն

* Ղ. տաւը փակագիր փորագրուած է, և
կրնայ կարգացուել նաև ՇԼ կամ ՂԼ:



Ս. Վայոցիկի եկեղեցի խճանկից



Ս. Կարապետի եկեղեցի խճանկից

ու հետքերը կենդանի ապացոյց են այն երեւոյթին, թէ այդ տեղ բնակուել և պատսպարուել են եղել մի ժամանակ, գէթ իմ կարծիքով, աւելի քան 400 տուն բնակիչներ։ Գիւղի կամ բերդի արեւմտեան կողմում գեղեցիկ հովտի վերայ տարածուած են շատ ննջեցեալ-ների տապանաքարեր, որոյ վերայի խաչարձանները կամ փշրուած են սրբապիղծ ձեռքերից, կամ գետին են տապալուած ու հողի ուռոյցների տակ թաղուած ։

Այդ օրը՝ կէս օրից յետոյ՝ մենք թռդինք խժկօնքը և մի ժամից արդէն Տեղու գիւղումն էինք, ուր մտաբերելով Աղրակի գիւղի անոթը, դարշահասու թիւնից զգացած մեր ֆնասը, որոշեցինք գիշերել մեր սեպհական վրանի տակ, եկեղեցու հանդէպ, կանաչ մարգագետնի վերայ։ Այս երեւոյթը ցաւ էր եղել մանաւանդ գիւղաւագին . սակայն հասկանալով որ ես հարկադրուած էի այդպէս անելու, նոքա իրենց ճոխ սեղաններով հիւրասիրեցին մեզ, որոնք իրօք մի տեսակ ապացոյց և գրաւական էին այդ ժողովրդի հիւրասիրութեան և մարդավարութեանը։

Երեկոյեան՝ իւր կոյմանը բոլորովին արժանաւոր՝ սրտով և հոգով հայ, արժանապատիւ Յովհաննէս քահանայ Երիցեանը, սպառազինուած վերջին տեսակի ընտիր հրաղէններով, եկաւ մեզ հետ գիշերելու. զանազան կարեւոր հարցերի նկատմամբ մենք խօսեցինք շատ երկար. 'ի միջի այլոց նա տրտըն ջուժ էր թէ մինչև այսօր իւր տիրած Հին՝ Տեկուի գետինը, որ տրուած էր Ս. Երրորդութիւն վանքին՝ խոսքովանոյշ Հայոց թագուհուց, և վերահաստատուած է Աշոտ Շահանշահից, մի քանի շահասէր կառավարիչներ՝ յանձնել են եզիտիներին բնակութեան, զրկելով եկեղեցին իւր դարաւոր իրաւունքներից . . . Խեղճ քահանան արտապում էր մասնաւորապէս Սահակ կամսարականից կանգնուած հրաշակերտ եկեղեցու սգալի վիճակը. նա՛ ինչպէս լսեցի ուրիշներից, իւր բոլոր

ճիգերը չէ զլացիլ՝ թափելու այդ երջանկայիշատակ նախնիքների թանգագին և սրբազան աւանդը, եթէ ինչ տեսիլ փառաւոր կացուցանելու, այլ գէթ անխախտ պահելու և ապագայ սերունդեան ձեռքը յանձնելու համար. որովհետև Տէր հօր ունեցած օրինաւոր կալուածադրերը յափշտակուած են 1877 և 1878 թուս.՝ թրքական պատերազմի ժամանակ սրկկաներից. ուստի և բաւական չհամարելով շրջապատող հասարակութեանց օրինաւոր վաւերացումը, խնդրեց ինձ բերել տալ տաճկաստանից Հայրենիք լրագրի այն համարը՝ որի մէջ գետեղուած է Սուլթան՝ Արդիւլ-Ազիզի հրովարտակը, ընդհանրապէս յետս խլել այն բոլոր եկեղեցապատկան հողերն ու կալուածքները, որոնք անցել են ուրիշ տիրողների ձեռք և ճանաչել նոյա (եկեղեցեաց) իրրե յաւիտեանական սեպհականութիւն։ Այդ իրաւունքը Սրբազան Ներսիսի միջնորդութեան արգասիք է, և եղել է նորա պատրիարքութեան ըսկզբում։

Տէր հայրը լսելով՝ որ չարաչար և միանգամայն անտանելի տանջանքով այդ օրը ես բարձրացած եմ եղել Ղառաւնդ ամրոյցը, պատմեց՝ որ աւանդութեամբ խօսվում է՝ թէ Ժէ. դարում, երբ այդ բերդի հարսուէքը և դեռահաս աղջիկները արձաթեւայ կոչիկներով (նալըն) գնալիս են եղել խժկօնք ուխտ, հանդիպել է նոյա մի պարսիկ արշաւող խան, որ բռնութեան ծանր կապալներին տակ գլխի է տալով Պարսկաստան։

Նա պատմեց նոյնպէս խժկօնք ուխտի վանահօր (թերեւ վերոյգրեւու անցքին ժամանակ) Յովհաննէս վարդապետի հերոսական սխրագործութիւնը. որ երբ պարսիկ սրկկաները յափշտակել են վանքը, այդ վարդապետը միայնակ գնացել է նոյա շաւղով հին Տեկուում, սկսուել է նորա և աւաղակների մէջ ճակատամարտը. Յովհաննէս վարդապետը սպանել է 10-12 մարդ ու խլել է աւարը. որի առ-

Թիւ և ժողովորդը յատկացրել է նորան ֆեադալային (զլխատող) անունը, թէ և վերջում ինքն ևս զլխատվում է սրկաններին :

Առաւօտեան այցելելով Ս. Երրորդութիւն եկեղեցին, ես նկատեցի՝ որ այս 2—3 տարւոյ ընթացքում կատարեալ խորխտութիւն և բացուել է . անհետացել էր՝ 'ի միջի այլոց՝ նաև կիսարձանը, որ պէտք էր երջանկայիշատակ հիմնադրի՝ Սահակ կամսարականինը կարծել, և որ զետեղուած էր աւրամոնեան որսի վերայ, երկու նեղ լուսամուտներին կից թռչնոց արձանների տակ : Արեւոք քանի քանի այդպիսի ընտիր և պատուական արձաններ ու յիշատակարաններ փշրուել ու անհետացել են, այդ՝ բոլորից մուսացուած՝ անպաշտպան սրբավայրերից . . . :

Նկարեցինք վաճառք բոլոր կողմերից, հիանալի է այդ Տաճարի հիւսիսային որմը. նա ընտիր է իւր ոճով, նուրբ քանդակներով ու մանուածքներով. այդ տեղ կատարելապէս փայլում են հայ ճարտարապետի երկնատուր ձիրքերը : Մինչ մենք պատրաստուէինք հեռանալու Տեկուոյից և վայելում էինք տէր հօր պարզ և ընտիր կաթնեղէն կերակուրներով հարուստ սեղանը, սկսուեցաւ սաստիկ քամին և չորս կտոր մեր նկատառիւնից (Տեկուոյ) որ դրել էինք չորանալու, վայր ընկան և փշրուեցան . մեզ մօտ մնաց միայն մի տեսարան արեւելիան կողմի ¹ :

Մալրաւում իջնանեցինք իմ վաղեմի ծանօթ Սուգիա—Աթոյի տունը, որ մի պարզ շինական է, հասկացող և ժողովորդի մէջ հեղինակութիւն ունեցող մի երչտասարգ . ևս վատահ նորա բարեարտութեան վերայ՝ խնդրեցի ուղեկցել մեզ հետ Մրէն, որի շրջակայքում լի են սրկանների բոյներ, ֆիւրգերի վրաններ, և քիչ մարդով մնայր սաստիկ երկիւղալի է . . . Մրենում մեզ հետ էին չորս Մալրակեցի սպառազինուած կտրիճ պահապաններ : Մոռա-

ցայ յիշել, որ Սուգիա Աթոյի սենեակի մէջ, տոխտակամածի բարձրը՝ շարւած էին մի շարք սրբատաշ քարեր տեղտեղ հայկական տառերով. որ աղաւաղուած լինելով, հազիւ թէ ինձ հնարաւոր եղաւ կարգաւ այլաբանը .

«Ես՝ Նանարատս խաչս.....»

Իմ նստատանայը՝ թէ ինչպէս էին խղճահարուել նորա ձեռնամուխ լինելու մի այդպիսի սոսկալի սրբապղծութեան, Աթոն ինձ պատասխանեց, որ թէպէտ դրոս պատկանում են Մրենի եկեղեցուն, կամ ուրիշ շինութեանցը, սակայն այս տեղ փոխադրել են ֆիւրգ—Մախսուդ—աղոյի ապարանքից, որ այրուեցաւ ոռաւ պատերազմող զինուորներից : Դա մի տեսակ ցեց էր Մրենի աւերակներին . թէ և բոլոր ջանքը դործ դրեց կաթոգիկէ եկեղեցին ևս դետին տապալելու, սակայն նորոս հաստակաւ ուղի և ամուր որմերը մինչև յաղթութիւն մարտաւեցին կործանող ձեռքերի դէմ :

Իմ որոշումը երթալու Բագրան այս տեղից, կանոնաւոր ճանապարհ չլինելու՝ ակամայից փոխուեցաւ :

Մալրաւի մի բաւական մեծ գիւղ է. խճկօնից դետակի եզրը փոքրիկ ձորակի մէջ դրուած . հայաբնակ է, ալքատ եկեղեցիով, և թող ներուի ինձ ասել . . . պարտք եմ համարում հրաւիրել Ս. Սինոգի ուշադրութիւնը քահանայի մասին :

Հինը—վեց ժամից յետոյ, քարքարոտ ճանապարհը պարզեց մեր ոռաջ Մրենի այգետեղերը, ապարանքների մնացորդները և գեղեցկաշէն կաթոգիկէ եկեղեցին, որի մասին մանրամասն կերպով ես խօսել եմ՝ Մեղու Հայրատանի լրագրի 143 և 146 թուերում, 1881 տարւոյ :

Մրենում ինչպէս ժողովորդը ասում է, կրակ էր թափվում երկրից . մենք հազիւ թէ ընկանք կաթոգիկէ եկեղեցին, որ այդ լինի եւ շինութեանց կեն-

¹ Ծան. Տպ. Գանի մի տեսարանք Տեկուոյ

անեմ 'ի Տեղադրութեան Երրակայ, էջ 131—134 :

դրոնումն է, քողարքի բոլոր ծայրերից մի ժամ հեռաւորութեամբ. (Տես Դ Տախտակ)։ Իրիկնադէմին ես օրինակեցի արեմտեան որմի երեք չափից բաղկացած խոշոր արձանագիրը, որ վերանորոգելու ժամանակ գրերի երկու ծայրերում և մէջտեղում խաչ արձաններ ու պատուհան են գրել։ Ահա այդպիսին.

... որդի Հերակլի բարեկամող Թագաւորի (եւ իշ) խանութեան (խաչարձանով կարկատուած է) մենագով պատրիկի կուրապաղատ ... իս պարկ ... ոց եւ Ասորոց եւ յեպիսկոպոսութեանն սըրբա (կարկատուած է) ոկի (կամ ովի) իղոսի եւ ի սանուտէրութեանն եւ սե ... կայ եւ Աշարունեաց տեսուն շինեցաւ սուրբ եկեղեց (կարկատուն) ութիւն կամսարականաց եւ Մրենոյ եւ ամենա ...

Հետեւել ութ հատ Շիրոկում զետեղուած արձանագրերը իսկականների հետ ստուգելուց յետոյ, որ տու հասարակ բաւական ճիշդ էին լինում, սկսեցինք նկարել, բայց աւերակների կաթոլիկէից հեռու լինելը, (մենք զետեղուած էինք կաթոլիկէ եկեղեցու խորանում), և ասօմպին եղանակը կատարելով արգելք էին մեր գործի յաջողութեանը. շատ մեծ գծուարութեամբ նկարեցինք մեծաչէն ապաբանքի քանդակագործ գուռը, որ ըստ Հայր Ալիշանեանի, թուի լինել բնակարան Դաւթայ Սահառունոյ, կաթողիկէն շինող և Մրենի տիրոյ. (Տես Զ Տախտակ)։ Դորա ճակատին փորագրուած է չորս սուղ արձանագիր՝ Զ թուականով. մնացածը տեղի բարձրութեան առթիւ մնաց անընթեռնի, թէ և կարելի էր կարգաւ տեղ տեղ միայն ու այն ալ մեծ գծուարութեամբ. ինչպէս կային այս խօսքերը. « Իմոյ Աստուած շնահաւոր արասցէ յաւիտեանս զաւակաց ... »

Դորա հանդէպ է փոքրիկ խորանը, երեք դռնով և նոյնքան նեղ և ոչ այնքան երկար՝ պատուհաններով. կարմիր կախածոյ քարով և նուրբ ու վայելուչ քանդակներով զարդարուած. դո-

րա արեմտեան դրան շրջանակի հետ պտոյտ է տրուած, իւր տեսակով, գէթ իմ աչքում, իւր ներութեամբ և քանդակի մաքրութեամբ իմ տեսած բոլոր արձանագրերին պիտազանցողը Զ ի Զ թուականով. սրով մի սնն Մխ. (Մխիթար) անունով վարդապետ, Տէր Յակոբի հայրապետութեան և շեւոնի թագաւորութեան ու Սահմապինի պարտնութեան ժամանակ, յիշում է՝ որ այլոց օգնականութեամբ վերակառուցել է այդ խորանը։ — Դորանից սակաւ ինչ հեռու, կայ մի ուրիշ ընտիր խաչարձաններով ու մանրիկ քանդակներով հաստատուած, ըստ երևութիւն հրաշակերտ շինութեան մնացուածք, (Տախտակ Զ.)։ Մի այլ քանդակագործ շինութիւն, որ յար և նման էր վերոյգրեալ խորանին, ոչ թէ բնութեան և ժամանակի հարուածներից, այլ անսիրտ հրէշների սրածայր մուրճերի ներքե կիսաշափ անհետացել և քաջքայել է։ Գուցէ դորա խաչանիշ քարերը Քիւրդ Բէգի կամ Աղայի սալայտակներն ու որմերն են կազմում. . . . Այս օր Մրենից հաղարուոր տապանաքարեր, ո՞վ դիտէ ինչպիսի պատմական յիշատակութիւններով հարուստ, այլազնեաց ամբողջ գիւղեր են կառուցել. . . . Էս գոնէ ակնհասեա եղոյ որ գերեզմանաքարերը խախտած իրենց իսկական տեղերից՝ կամ տարել են և կամ մնում է ուղտապանի երևալուն, որ փոխադրուին օտար բնակարաններ. . . .

Հրաշալի սեսարաններ են պատկերացնում այս տեղից՝ նաև սպիտակ հարսնութեան քողը երեսին առած՝ Մայր — Այրաբալը, որ արչարոյսի և վերջարոյսի ժամանակ զլուխ խոնարհած՝ կարծես խորհրդաւոր կերպով ողջունում է Հայաստանի նուիրական վայրերին. . . . Արեւելքում՝ կանգնած է սպիտակահեր Արագածը, արեմտեան հիւսիսում՝ Եաղուճա լեռը, արեմտեան հարաւում՝ Կողբի շրջայալ կապ լեռները և սեպացած Քեօս — օղլի ժայռը, արևելեան հիւսիսում՝ Ալաճան, և այլն։ Տօթի անտանելութեան

հետ ջրի պակասութիւնը, (չւրը բեր-
վում է խագարանի ձորից, աւելի քան
մէկ ժամու ճանապարհ հեռու Մրենից),
կարիճների նշանաւոր քանակութիւնը,
օձերի բազմութիւնը և միւր առողջու-
թեան խախտուիլը՝ պատճառ եղան,
ոչ միայն շարունակելու աշխատու-
թիւնը, այլ և խոշնդոտն եղան Քա-
ղարան աւանին այցելելու. սակայն ես
մասամբ յազգեցուցի իմ այգւիսի ծա-
րաւը՝ Մրենի սահմանագլխից, ծիւծիւ
ժայռերի գագաթից, որոց ներքից՝
ձորակի միջով՝ աղմկալից շառայմամբ
հոսում են՝ աջ կողմից (արեւելքից) Ա-
խուրեան գետը, և արեւմտից՝ խփո-
նից անուշահամ առուակը խոռնվում
են միմեանց՝ երտախի ծոցը թափուե-
լու. այդ տեղ Ղրզ-դալասի (Ոջ-
Վայս Բերդ) կալուած ամրոցից, որ հի-
մնադրուած կործանուած է, երևում են
հետուն՝ ձորի խորը խորշերում, Բա-
ղարանի այգեաց շարունակութիւնը,
նոցա մենաստանների խարիւղ գլմ-
բէթները, որոց հիմքերը մի ժամանակ
ծառայել են կռապաշտական մեհեան-
ների, որոց մէջ՝ նախ քան ճշմարիտ
Աստուածաշարութիւնը, բազմած են
եղել ձուլածոյ կուռքերն, ունենալով ի-
րենց առջև կրակով լի ասորւշաններ:

Գործերի այս կերպ անկանոն դա-
սաւորուելը՝ հարկադրեցին մայիսի
13ին առաւօտեան վաղ, ժամը հնգին
դուրս գնալու այդ մի ժամանակուայ
մարդաշատ քաղաքի տրտառուալի փը-
լատակներէից . . .

Աւերորդ չէր յիշել նաև որ ներ-
քուտ Մրենի կաթողիկէի որմնասեան
ճակատին դրոյմուած կայ հայկական
տառերով «ՏԷՐ ՄԻՐԴԱՏԻ ԳՈՐԳՐԱՆ» .
և դորա հանդէպ սեան վերայ դրոյմը-
ւած է հետեւեալը.

Թ Ո Ւ Ր Ն Դ Ի
Ն Է Դ Ո Վ Լ
Ա. Թ. Ի Ն

Որ է. Թուրն դիւն է դովաթիւն,
իսկ այս արձանագրի ձախ կողմում


քանդակուած է մի գեղեցիկ խաչ, իւր
թևերի տակ ունենալով զոյգ սրիւր.
իսկ բարձրում երկու պարսաքարերի
նման ուռուցիկ արձաններ¹:

Անտանելի ներութիւնով հաղիւ թէ
մեր կառքը դուրս եկաւ բնակարաննե-
րի փլատակներից և պարսպապատ ոյ-
գետեղերից, որոնց առաջինները կա-
րելի է հասցընել 600ի, իսկ վերջինները
12 — 13 հազարի:


Կէս օրին մենք իջանցեցինք պարս-
կաղնակ Ուլմ՝ կամ Ալաւան գիւղի
հանդէպ կաթնահամ առուակի մօտ. և
թէպէտ իմ ցանկութիւնն էր նկարել
դորա փոքրուեր եկեղեցին, որ հի-
մնարկուած է եղել 637 թուականին,
Սուրբ Անանիայի անունով, սակայն մա-
քուր սենեակի բացակայութիւնը դար-
ձեալ արդէնք եղաւ, իսկ մեր ունեցած
վրանով՝ չափազանց դժուար էր, որով
հետև քթանի մանր ծակաթիքից լոյսը
ներս էր թափանցում:

Անցանք Մաղաւս — քերդի մօտով, ո-
րի կանգուն բրդերն ու պարիսպները
նկարելու անհնարին էր մեզ. այս տեղ
չկար նաև կանոնաւոր ճանապարհ բըր-
դաղնակ գիւղը՝ Մաղաւս — բերդ մանե-
լու: Զիւնները սաստիկ յոգնած լի-
նելը, հետեւաբար և կառքի ծանր շար-
ժուելը՝ հարկադրեցին ինձ այդ տեղից
մինչև Անի հեռի գնալու, երեք վերս-
տալափ, մի երկու մարդ օգնութեան
ուղարկելու համար. գիշերը վրայ էր
հասնում արծաթափայլ աստղերի ե-
րեւալու հետ. ես էլ մոտոյ սիրունիկ Ա-
նիի փառաշէն պարիսպներու մէջ ներ-
սէս վարդապետէ հարկաւոր օգնու-
թիւնը ստանալով. հաղիւ թէ մի ժամ
յետոյ՝ ինձ մօտ էր արդէն կառքը. սա-
կայն անհաւատալի երեւոյթ էր՝ որ
կառքը իջնելով Մաղաւսաձորի ժայ-
ռոտ և ահաղին դառնվայրը՝ մեր ա-
պակիքն ու շիշերը մնացել էին բոլորս.
վին անմիաս: Այս ճանապարհը ամե-

¹ Դրան. Տպ. Մրենի այլ և այլ արձանագրու-
թիւններն նշանակուած են ի Շիրակ, երես
137-41. Նոյնպէս և Էկեղեցւոյ ճակատին քան-
դակներն, որք կ'երևին սառ ի Ե Տախտակի:



Խաչարանի խճուղի



Արժանագիր յորդն Ս. Սարգիս եկեղեցւոյ

նակարճ և ընտիրն է, եթէ Անիի հո-
րաբարձութիւնը մասնաւորապէս հոգ-
ունենար այդպիսին հարթելու, ազա-
տած կը լինէր Անիից այն կողմ անց
կենդոց աւերակաց այցելուններին, ա-
ւելի քան 10 կամ 12 վերստ հեռաւոր
պողոտից. բայց հասարակական ընդ-
հանուր օժանդակութիւնից զուրկ, Ս.
Էլմիածնի աչքից ընկած փլատակնե-
րին, որ տեղից այդքան ճօխ միջոց-
ներ, որ անհրաժեշտ պիտոյքները թո-
ղած՝ ճանապարհներէ մասին մտա-
ծէր . . . Զորս օր մնայինք Անուում,
բայց անվերջ քամին ու անձրևները
բոլորովին խաղնդառն եղան մեր գործի
յաջողութեանը, այնպէս որ հազու թէ
10 կամ 15 նեղատիֆներ կարողացանք
ստանալ:

Տեղացի Անի գիւղի թուրք Մօլլէն՝
իմ խնդրանայ համաձայն բերեց այն
աշտանակը՝ որ գտնուած է եղել ան-
ցեալ տարի Պահլաւունեաց պալատի
մօտերից, մի ահագին կոյտ երկաթի և
այլ հասարակ և բոտ մեծի մասին՝ իս-
պառ ոչնչացած մետաղների հետ. այդ
աշտանակը գէթ իմ աչքում այնքան
հին չերեաց, որ կարելի լինէր մինչև
Անիին ժամանակակից համարել, ուս-
տի և աւելայրենկով դար պերայ նորա
թանգ գնահատութիւնը, ես 'ի հարկէ
պէտք է հրաժարուէի վեր առնելուց:
Աշտանակի երկարութիւնը գրեթէ մի
արշին էր ¹, դեղին պղնձից պա-
տուանդանը՝ քրդական վահանի նման
բոլորչի և ուռուցիկ էր, սիւնը գալա-
րուն և կոպիտ իւր ծայրին՝ մոմի կա-
թիլներէ համար, ունենալով մի հատ
ութ անկիւնանի փոքրիկ ափսէ: Ամ-
բողջ աշտանակը բաղկացած էր չորս ա-
ռանձին մասերից:

Իմ ծանօթ տաճիկը մատուց ինձ մի
հատ քառակուսի — սրածայր նետի սը-
լաք (պողպատեայ), որ գտնուած էր
պարսպի ճեղքերից: Ի միջի այլոց նո-
քա շատ բաններ պատմեցին, թէ ինչպի-
սի նշանաւոր ոսկեայ և արծաթեայ զա-

նազան անօթներ ու առարկաներ ան-
ցել են իրենց ձեռքով և ձուլվել քա-
ղաքի ոսկերչույք քուրաներում: Փոքրիկ
խաչեր, մետաքներ զանազան տեսակ
տառերով և արձաններով, գեղեցիկ
կոճակներ, մատանի, ապարանջան և
այլն, գտնուելիս է եղել մի ժամանակ
մեծ քանակութեամբ. որպիսիք՝ ինչ-
պէս ասացի՝ վաճառել են նոքա քա-
ղաքներում՝ աննշան արժէքով: Վանքի
ժառանց ջոյց տուեց ինձ մի ահագին
կոյտ պղնձեայ դրամների, որոնք
թէ իսպառ անցել և փոշիացել էին:

Հայր սուրբը յոյց տուեց ինձ իւր
սեպհական Աւետարանը 1201 փրկչա-
կան և Հայոց 650 թուականին, մի Յով-
հաննէսի ձեռք գրուած, հին, փայ-
տակար, ոսկեզօծ նկարներով, բաւա-
կան հաստ և կոպիտ մազաղաղթից,
համարեա 12 վերջօք ¹ երկարու-
թեամբ և 78 վերջօք լայնութեամբ, եր-
կաթագիր, որ և սորանից 300 տարի
առաջ վերակազմուած է եղել Տանձո-
տեցի Յովհաննէսի ձեռքով, և նուր-
բաժ է եղել Սրբոց՝ Կոստանդինոսի և
Գրիգորի եկեղեցիներին, թէ որ տեղի՝
յայտնի չէ. ունի մի քանի ոչ այնքան
նշանաւոր յիշատակարաններ և վկայ-
ութիւնք նուիրատուութեանց:

Հայր սուրբի հետ ես շատ խօսեցայ
թէ միաբանութեան նեղ և դառն վի-
ճակը բարեւաւելու և թէ փոքրաւոր շի-
նութիւնը վաղօրով ամրացրենլու մա-
սին. նա բոլորովին ամօզս իւր վիճա-
կից, գանգատվում էր ընդհանրապէս
հայ ազգի և մասնաւորապէս չլիպա-
տույ հասարակութեանց անտարբերու-
թեանը. սակայն այս իմ խորհուրդն
էր՝ գէթ շատերից՝ միայն կադրանիտէ
թաղուհու և Սմբատ Տիեզերակալի յի-
շատակը՝ կաթողիկէ եկեղեցին՝ այս ա-
ւուր դիրքով ապագայ սերնդեան
ձեռք յանձնելու համար՝ անպատճառ
հնարաւոր միջոցները 'ի դարձ գնել նո-
րան կանգուն պահելու. կարկատել
ճեղքուած տեղերը, նստացրնել իրենց

տեղերում՝ թափուած քարերը, կողմել միաբանների (պահապանաց) մի ուժեղ խումբ, պարսպով պատել գոյա բնակարանը և կառավարութիւնից արդէն յանձնուած 100 օրովար արգաւանդ հողը մշակելու համար՝ բնակեցնել այնտեղ երեք չորս տուն հայ գիւղացիներ, Հակոբակ զէպըում՝ ապարդիւն են բոլոր աշխատութիւնը պայծառացնելու եկեղեցին (Ս. Լուսաւորիչը), որովհետեւ անցեալ 1882 թուի նման, օրը ցերեկով կը թալանեն դարան, և 1883 թուի, այս ժամանակում տեղի ունեցող չարագործութեան պէս՝ իսպառնապառ աւարի կ'առնեն բողբոջ՝ ինչ որ վանքին ու վանականներին են։ Վարդապետը ցաւելով պատմեց՝ որ բացի 17 կամ 18 տուն Տաճիկ Անեցի գիւղացիներից՝ քանդուած առնուած են աւերակների քարերից նաև շրջակայ հայ գիւղացիներ։ Մովսէսիցին, Կարմիր-վանքիցին, Արազի գիւղացին, և այլն . . . :

Թէ և իմ՝ արտի փափաղն էր նկատել Ալաճա լեռը, որ Անիի արևմտակողմին է, Եսհնին, Նախրճի-թափան և իւշ-թէփէրը, որ Ալաճայի հետ գէպ 'ի հիւսիս չլիճայի օղակների նման շարուած են կարողով, սակայն բաց 'ի եղանակի վատութիւնը, շատ հեռու լինելով՝ Անույ բարձրաբերձ պարսպների քամալից՝ այնքան փոքր էին երևում, որ տեսնողը նոցա ընդհանուր գիրքը (և մանաւանդ վերջին ուսու-թըքական պատերազմի ժամանակ նոցա վերայի ելևէջները, հողէ պատնէշները, և այլն) անկարելի էր նկարել։ շատ ցաւելով որ կամայ ակամայ պարտաւարուած էինք թողնել մեր սիրելի Անին, առանց կատարելապէս իղձերս կատարուած գտնելու, մայիսի 17ին՝ կէս օրից յետոյ, ուղեւորեցանք Հոռոմուսի վանքը, երկու ժամից յետոյ փոքրիկ ձորակի մէջ Ախուրեանի եզրը, զոյգ մանր եկեղեցիների մօտ. ես ծնկալոր համբուրեցի իմ աննման Աչոտի սրբազան՝ զամբարանը, մի կոշտ և սառն մահարձան . . . մի զոյգ արտասուաց տաան

կաթիլներ. և ահա՛ զսքա տրտալայտող են մարդկային սրտի դառն թախիժներ . . . արտասուքով թրջեցի այն տառերը, որ մակարեւում են՝ Աշոտ քաղաւոր խօսքը։

Մտանք վանքի սրահով. տեղական վանահայրը՝ մի Յակոբ Վ. Ախալցիցի՝ բացակայ էր վանքից. նա յանձնելով իւր իրաւասութիւնը ծառային, ինքը ուղեւորել էր Արաս-թուման, առաջնութիւնը կաղաւթելու։ Այստեղի սրբավայրերը ես դասայ անմտբուրութեան մէջ . . . երեք Հոռոմ կղերներէ շինուած (Բդարում) Տաճարի հետ լեկրիս այլազգին, Հրէան էլ այնպէս չլրտուէր, ինչպիսի դրութեան մէջ էր նա այսօր . . . :

Կարծես այդ սրբավայրերի գլխով նոյնքան չար ու բարիք են անցել, որքան որ Յովնանէս-Սմբատից մինչև Շիրակունու արձակուելը . . . Մ'ը են եկեղեցու դրեանքն ու զարդարանքն, նորա հարստութիւնը, ջրաղացի արդիւնքը, Տալարում՝ մատաւարապէս 700 օրավար հողն և սեպհական բանձարանոցի եկամուտը, այցելուների և ուխտաւորաց առատ տուրքերը, ուր, ում գրպանում գիզուեցան արդեօք այդ բոլորը . . . Տեղական Տէր Շմաւոն քահանան էլ վաղուց արդէն խոյս է տուել գիւղից . . . :

Վաղ առաւօտեան վերջապէս ցանկալով ձեռնամուխ լինել՝ գործին, 'ի զուր ժամանակ էի պտուում՝ արեւի ճառագայթներից օդուռելու. նա Ալաճայի մինչև Արագածի բարձրուեցները ծածկուած էր լծանձրքօղով. մերթ օմերում էր յորդ անձրև, և մերթ մանրիկ կաթիլներով ցօղվում էր երկիրը. հազիւ թէ արևելեան կողմից մի նեղատիպ ստացած, մի ամենակարևոր հանգամանք, մի դժբաղդութիւն, որի պարզելը աւելորդ եմ համարում ստիպեց դուրս գնալ Հոռոմուսի պարսպներից։ Այնպէք մենք երկու միմեանց կից գրմբէթաձև շինութեան մօտից, որոյ սովորաբար կոչում են խոշուն կամ՝ դռնէք. դա հնումն Անույ յաղթական դու-

« Ըն է եղել, և իւր վերայ կրում է մի միայն այսքան արձանագիր .

« Քրիստոս ողորմի վարդա » :

Իլանդիում, ուր գիշերեցինք, լսեցի որ անցեալներում այդ գիւղի քարահայրում գտնուած է եղել մի հատ բնականի մեծութեամբ ոսկեայ աքաղաղ, և մի ձուլածոյ ոսկե — խնձոր, որ քիշակցի Մուլլայի սեպհականութիւնը լինելով վաճառել է Ս. Էյմիաժնի թանգարանին . բայց չգիտեմ թէ ինչու առհասարակ այդպիսի թանգաղին հնութիւններ չեն երևում յիշեալ թանգարանում : միթէ անցնում են մասնաւոր անձանց ձեռք . . . :

Լսեցի նոյնպէս՝ որ 1883 թուին ի միջի այլոց, մի և նոյն քարահայրում մի Աղեքսանդրապոլցի գտել է վեց հաս

պողպատեայ սրեր, առանց պատեանի և երախակալի, որ ըստ երևութին փոել և փոշիացել են այդպիսիք : Մի և նոյն տարին գտնուած է այդ տեղ մարդկային մի ամենամեծ գանկ՝ իսպառ քարացած, ձուր կեղևներ, անասնոց և մարդկանց քարոյցած ոսկորներ և մի զոյգ երկաթի թէ պղնձի տախտակներ՝ սեպած և տառերով :

Հետեւեալ օրը, 19 մայիսի, եղաւ նակը դարձեալ ամպամած և մառախլապատ էր : Գետը (Ախուրեան) աւելի բարձրացած լինելով մեզ աննկարագրելի դժուարութեամբ յաջողեցաւ անց կենալ միւս ափը : Այլ ևս անկարող լինելով նկարել Շիրակաւանի, Արալըղի, Թիքնիզու և այլ տեղերի աւերակները, կէս օրից յետոյ՝ մենք արդէն Աղեքսանդրապոլում էինք :

Ի 24 Մայիսի, 1884 Աղեքսանդրապոլ :

ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆՑ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԵԱՆՅ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՅՍՅՐԱՐԱՏ

Դ. Լ. ՄԱՐԴՈՎՑԵՎԻ

(Տէս Հասար ԽԱ. 193, 289. ԽԲ. 97, 193) :

ԺԳ

Երրորդ օր. — Քրդաց վրանին մէջ :

Ինձ համար այս տարաբաղդ օրուան առաստար նոյնպէս գեղեցիկ էր՝ ինչպէս նախընթացը : Մեր թշուառ վերելից երրորդ օրն էր 10ը օգոստոսի :

Արովհետեւ աստի գէպ ի վեր բուսականութիւնն կը դադարէր, այլ մենք դեռ ձիւրով առաջ պիտի երթայինք : Քրդերն աւելցուցին մեր ձիւրուն պարէն՝ երկու ևս լեռնային եղներ իրենց եզավարներով, վրանին բռնաւորեալ խոտ :

Հապիւ արեգակն սակաւ մի տաքցուց առաւօտեան զով օդը՝ մենք նորէն ճամբայ

ելանք : Մեր ճամբան գէպ արեւելք էր, և հորաւային-արեւելք Արարազայ դարին՝ գէպ ի Սարգար-Բուլազ և առ Փաբըն Մասիս, ուստի պարսիկ հողէն չիտակ պիտի ելնէինք խորհրդաւոր լերին ծայրը :

Այս ճանապարհով սկսաւ իմ թշուառութիւնս, և քիչ կը մնար՝ որ զիս ի գեղորման իջնջընէր : Առաւօտէն զգացի՝ որ ոյժ կը պոկուսի ինձ . մասամբ մը այն հետեանք էր առաջի կրածներուս ահագին զիւրին մէջ, ուր քիչ կը մնար՝ որ դուրէի և կորսուէի անդունդին մէջ . այն զիւրերն ոյժ մէջ կարեց իմ ոյժս, որ արդէն ցնցուած էր երկար և տաժանեի ճամբորդութեամբ ի Պետրբուրգէ ցթիֆլիս, մասնաւորապէս ի Թիֆլիսէ ցերեւան, ոգեկորոյց և անիծեալ սայլին մէջ, Քարաբազ և Երաս